

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՈՒՄ
(1983 թ.)

Ռ ու ղ ա ր ի ա

«Երևան» միության Պլովդիվի վարչությանը կազմակերպում է դասախոսություններ զանազան թեմաներով: Հերթական հավաքության ժամանակ բժիշկ Կարո Թովմասյանը դասախոսել է «Տպագրություններ 1982 թ. կազմակերպված հատուկ արշավին դեպի Թուրքիայի արևելյան նահանգները, մասնավորապես Տիգրանակերտ քաղաքն ու անոր շրջակայքը» հարցի շուրջը: Նա կանգ է առել այդ վայրերի փոքրաթիվ հայ բնակչության այսօրվա ծանր վիճակի վրա, ցուցադրել է գոնավոր լուսանկարներ ու պատասխանել ներկաների բազմաթիվ հարցերին:

«Երևան», 1 հունվարի 1983

«Երևանի» Վառնայի վարչության և Յավորովի անվան ընթերցարանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառուս» վեպի բուլղարերեն թարգմանության քննարկումը: Բացման խոսքում Քալինա Տիրովան նշել է, որ գիրքը աշխույժ հետաքրքրություն է առաջացրել ընթերցողների շրջանում շնորհիվ հեղինակի գեղարվեստական մեծ վարպետության ու Հակոբ Օրմանճյանի հմուտ թարգմանության: Ելույթ ունեցողներ Պ. Յանելը, Ի. Միրալյովան, Ֆ. Յորտանովան, Զ. Տերտերյանը կանգ են առել Շիրվանզադեի ստեղծագործության գեղարվեստական արժանիքների վրա:

«Երևան», 9 ապրիլի 1983

Լ ե հ ա ս տ ա ն

Լեհական «Պշչին» հանդեսը իր վերջին համարներից մեկը նվիրել է Հայաստանին, նրա պատմությանը, մշակույթին: Հոդվածներից մեկում մատնանշված է, որ լեհական պետության տարածքում առաջին հայերը երևացել են տակավին վաղ միջնադարում՝ կապված թուրք սելջուկների և մոնղոլների Հայաստան կատարած արշավանքների հետ: Դադթականների հաջորդ ալիքը լեհաստան է եկել 1453 թ. Կոստանդ-

նուպոլսի անկումից հետո: Այս շրջանում լեհահայերն ունեին լավ կազմակերպված համայնք, ինքնավարություն, օգտվում էին մի շարք արտոնություններից: Ի նշան երախտագիտության, լեհահայերը երկու գնդով մասնակցել են 1410 թվականի Գրյունվալդի հայտնի ճակատամարտին՝ ընդդեմ գերմանացիների և ապա, որպես փորձագետներ, թուրքական զավթիչների դեմ մղվող կռիվներին:

«Երևան», 2 ապրիլի 1983

Գ Դ Հ

Բեռլինում լույս է ընծայվել «Լեռները ողբում են իմ տառապանքների գիշերը» վերնագրով անթոլոգիա՝ հայ դասական քնարերգությունը ԳԴՀ-ի ընթերցասեր հասարակայնությանը ծանոթացնելու նպատակով: Անթոլոգիան սկսվում է Մեսրոպ Մաշտոցի շարականներով և ավարտվում Սայաթ-Նովայով, նրանում տեղ են գտել միջնադարյան հայ քերթողական արվեստի այնպիսի ներկայացուցիչների գործերը, ինչպիսիք են Դավթակ քերթողը, Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Գրիգոր Աղթամարցին, Գրիգոր Նարեկացին և ուրիշներ: Գրական այս գոհարները բնագրից և ուսերենից թարգմանել են Աննեմարի Բոստրոյեմը և Հորստ Լոթար Թեկլայթը: Ժողովածուն հրատարակության է պատրաստել պրոֆ. Լևոն Մկրտչյանը, որը գրել է նաև վերջաբանը: Այն հրատարակված է շքեղ, զարդարված է հայ մանրանկարչության նմուշներով:

«Հայրենիքի ձայն», 29 փետրվարի 1984

Ս ի ր ի ա

Սիրիայի արաբ գրողների միության օրգան, Դամասկոսում լույս տեսնող «Օտար գրականություն» պարբերական հանդեսում հրատարակվել են Պարույր Սևակի ութ բանաստեղծությունները արաբերեն, որոնց թարգմանիչն է Միհրան Մինասյանը (Հալեպից): Թերթում տրված են նաև համառոտ տեղեկություններ

Պարույր Սևակի կյանքի ու ստեղծագործության մասին:

«Արարատ», 12 հունիսի 1983:
«Շարժում», 19 հոկտեմբերի 1983:

Թ ու Ր Բ ի ա

Լույս է տեսել Բարսեղ Թուղլաճյանի «Այվազովսկին Թուրքիո մեջ» գիրքը, ուր խոսվում է մեծ նկարչի՝ Թուրքիայում գտնվող նկարների մասին: Գիրքը բաղկացած է հետևյալ բաժիններից. 1. Այվազովսկու կյանքն ու գործունեությունը, 2. ցուցահանդեսները, 3. Թուրքիայի գեղարվեստի բնագավառում նրա գործունեությունը, 4. Թուրքիայում գործող ժամանակի (1839—1901) օտար նկարիչների անվանացանկը, 5. Այվազովսկու՝ Թուրքիայում գտնվող նկարներից մի քանիսի գունավոր պատճենները:

«Զարբոնք», 19 հոկտեմբերի 1983

Լույս է տեսել Գուրգեն Յաղրճյանի «Աբղուշամի Բ կարմիր սուլթանը» գիրքը, որտեղ հեղինակը տվել է Օսմանյան կայսրության պատմությունը՝ ծագումից մինչև 1922 թ.: Այս գրքի վերաբերյալ Բ. Աշտիշատը «Արարատի» մի շարք համարներում տպագրել է մանրամասն գրախոսություն:

«Արարատ», 6, 7, 12... հոկտեմբերի 1983

Ֆ ր ա ն ս ի ա

Փարիզում հունիսի 4-ին սկսել է գործել հայկական վավերագրական կենտրոն, որտեղ կարելի է գտնել Հայաստանի վերաբերող փաստաթղթեր, փաստանկարներ և այլ նյութեր: Կենտրոնի ղեկավարություն կազմում են՝ պրոֆ. Ժերար Դեդեյանը, պրոֆ. Ֆրեդերիկ Ֆելդին, էդուարդ Ժախտյանը, Ռիշար Ժերանյանը, պրոֆ. Տիգրան Գուլումճյանը, Շառլ դը Լամպեոթին, պրոֆ. Ժան-Պիեռ Մահեն, Սիրարփի Տեր-Ներսեսյանը, հայր Պերնար Ութին, Պիեռ Տեր-Սարգիսյանը և ղեկավար Իվ Թերնոնը:

Շարժում», 12 հոկտեմբերի 1983

Այս տարի Փարիզում նշվեց ֆրանսահայ գրողների ընկերության 50 տարին, որի կապակցությամբ ընկերության ղեկավարությունը բազմաթիվ շնորհավորանքներ է ստացել ինչպես սփյուռքահայերի, այնպես էլ Սովետական Հայաստանի մի շարք կազմակերպությունների ու գրողներից: Փարիզում հրատարակվող

«Արահետ» պարբերականը (1983 թ. № 7) ամբողջովին նվիրված է այդ տարեդարձին:

«Արահետ», № 7 1983

Սորբոնի Արևելյան լեզուների և քաղաքակրթության ակադեմիայի ինստիտուտի և Մխիթարյանների կողմից նոյեմբերի 6-ին կազմակերպվել է պրոֆ. Ֆրեդերիկ Ֆելդի հոբելյանական հանդիսությունը, որին մասնակցել են անվանի հայագետի հին ու նոր աշակերտները, մտավորականության ներկայացուցիչներ, գիտնականներ ղանազան երկրներից: Հոբելյանի ջերմորեն ներկայացրել է Վենետիկի միաբանության հայր Լևոն Զեքիանյանը, այնուհետև ելույթ է ունեցել Ֆ. Ֆելդի նախկին աշակերտ և պաշտոնակից պրոֆ. Ժ. Պ. Մահեն, որը սահուն հայերենով շնորհավորական և երախտագիտական իր խոսքն է ասել: Կարգացվել են բազմաթիվ շնորհավորական նամակներ, հեռագրեր: Գյուլբենկյան ֆոնդը հայտարարել է, որ ստանձնում է պրոֆ. Ֆրեդերիկ Ֆելդի գործերի հրատարակությունը: Վազգեն Վահագնի կարգադրությամբ հոբելյանը պարգևատրվել է ս. Սահակ Մեսրոպ շքանշանով:

Հանդիսության վերջում շնորհալի ասմունքները բանաստեղծություններ են կարդացել Վարուժանից, Արուսյանից, Չոպանյանից, կատարվել են երաժշտական համարներ:

«Այսարհ», 19 նոյեմբերի 1983

Ա ճ գ լ ի ա

Լոնդոնի Մաշտոց հրատարակչությունը լույս է ընծայել հայկական հեքիաթների մի նոր ժողովածու՝ «Առավել խնձորներ ինկան երկիրներին»՝ Միշա Գյուլյանի վերապատմումով:

Մաշտոց հրատարակչությունը մինչ այս լույս է ընծայել Գրիգոր Նարեկացու, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Թոթովենցի, Հակոբ Պարոնյանի, Շահան Շահնուրի և Պարույր Սևակի ստեղծագործությունները:

Ժողովրդական հեքիաթների այս նոր հատորում ընդգրկված են մի շարք հեքիաթներ նախորդ «Երեք խնձոր ինկավ երկիրներն» 1969-ին հրատարակված հատորից, դրանց մի մասը թատերականացված ձևով հաղորդվել է ռադիոյով և հեռուստատեսությամբ: Գիրքը՝ լուրջ գնահատականի է արժանացել մի շարք նշանավոր թերթերի կողմից:

«Այսարհ», 31 դեկտեմբերի 1983

Հ ա լ ա ճ ղ ի տ

Լեյդենում պրոֆ. Վալտենբերգի և Մալթի Սթոունի նախաձեռնությամբ հիմնվել է Հայկական ուսումնասիրության միջազգային միություն, որի բացումը տեղի է ունեցել Լեյդենի համալսարանի 50 անդամների ներկայությամբ: Համագումարին մասնակցել են բոլոր երկրների հայագետները, բացի Հյուսիսային Ամերիկայից, որտեղ արդեն կա նման միություն: Առաջինը ելույթ է ունեցել համալսարանի գրական մասի տեսուչը, որը տեղեկություններ է տվել եվրոպայի հայագիտության ներկա վիճակի մասին, Դոկտ. Ժ. Մ. Թիերիի զեկուցումը վերաբերվել է Ֆրանսիային, պրոֆ. Հաննիքինը՝ Գերմանիային, Պ. Թեսիեռինը՝ Իտալիային, հայր Վ. Զեբրյանինը՝ Մխիթարյաններին, պրոֆ. Վալտենբերգին՝ Հոլանդիային և Պ. Լեմանինը՝ Դանիային և Սկանդինավյան երկրներին: Համագումարի եռօրյա նիստերից երկրորդը նվիրված էր հայախոսության և լեզվաբանական հարցերին, իսկ երրորդը՝ պատմական և գեղարվեստական հարցերին: Համագումարին մասնակցել է նաև Մեսրոպ Ժ. Վ. Գրիգորյանը Վիեննայից: Համագումարի վերջում հաստատվել է ընդհանուր կանոնագիրը և ընտրվել է առաջին կենտրոնական մարմինը:

«Արև», 9 հունվարի 1983

Շ Վ Ե Ղ Ի տ

Ստոկհոլմից Երևան ժամանած շվեդահայ մտավորական, մանկավարժ Պավլո Մինասյանը, որ հայոց լեզու է դասավանդում շվեդական դպրոցներում սովորող հայ երեխաներին և ղեկավարում է Ստոկհոլմի հայկական ուղիորդամի հաղորդումները, Շվեդիայի հայկական պաշտոնի մասին «Հայրենիքի ձայնին» հայտնել է հետևյալ տեղեկությունները:

Շվեդահայ գաղութը կազմակերպվել է 1979-ական թթ. Մերձավոր Արևելքի երկրներից գլխավորապես Լիբանանից, Սիրիայից, Իրանից, ինչպես և Թուրքիայից գաղթած հայերից:

1887 թ. Ստոկհոլմում հրատարակվել է գույտ հայագիտական հանդես «Քննասեր» վերնագրով, որը լույս է ընծայել Նորայր Բյուզանդացին: Հանդեսը հրատարակվել է երկու համար և բաժանող չունենալու պատճառով փակվել է:

Այժմ Շվեդիայում ապրում են 1000 հայեր, որոնցից 500-ը՝ Ստոկհոլմում: 1974 թ. Ստոկհոլմում կազմակերպվել է և հիմա էլ գործում է «Հայկական մշակութային միություն» հայկական ակումբը, որն ունի դրադասան, ակումբը կազմակերպում է. դասախոսություններ, թատերական ներկայացումներ: Գրադարանի հիմնական ֆոնդը կազմում են Երևանից ստացված

գրքերը: Ստոկհոլմի ուղիորդ վեց տարի է, ինչ ունի երկու ժամ տևող հատուկ հայկական հաղորդում, որի ընթացքում տրվում են լուրեր հայրենիքից, սփյուռքի տարբեր գաղութներից և հնչում է հայկական երաժշտություն:

«Հայրենիքի ձայն», 29 փետրվարի 1981

Կ ա ճ ա ղ ա

Վանկուվերում հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 10-ը տեղի է ունեցել եկեղեցիների համաշխարհային խորհրդի վերցբերող համագումարը, որին մասնակցել է նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից նշանակված պատվիրակությունը: Համաժողովին պատվիրակությունը առաջարկել է, որ եկեղեցիների խորհրդի մարդկային իրավունքների հանձնաժողովը մի րանաձև ընդունի հայերի դեմ գործած ցեղասպանության վերաբերյալ: Համագումարը, որին մասնակցել են հարյուր երկրների քրիստոնյա եկեղեցիների երեք հարյուր պատգամավորներ, մեծամասնությամբ քվեարկել է «քրիստոնյա եկեղեցու կողմն հրատապ մտահոգություն ներկայացնող» հաջորդ մասին բանաձևը, որը տրվել է թերթում: Այնուհետև «Արարատ» կարգում ենք. «Առաջին անգամ ըլլալով, միջազգային տարողությամբ ժողով մը, կհաստատեն հայ ցեղասպանության պատմական իրողությունը, պատկառելի իր ձայնը կրաձրացնեն Միացյալ Ազգերու Կազմակերպության մոտ և կդիմեն քրիստոնյա բոլոր եկեղեցիներու խղճին՝ լսելի ընելու համար արդարության ձայնը»:

«Արարատ», 19 հոկտեմբերի 1983

Ա Մ Ն

«Արարատից» տեղեկանում ենք, որ 12 ամբրիկահայեր, երեք շարաթ ճամփորդելով Արևմտյան Հայաստանում, նկարահանումներ են կատարել, սակայն Կ. Պոլսում իշխանությունները նրանցից բռնագրավել են: Զբոսաշրջիկներից միայն մեկը՝ Ճոյս Եղիսյանը Դետրոյտից ճարպկությամբ կարողանում է անցկացնել նրկարահանած ֆիլմը: Դետրոյտում, Թեքեյան մշակութային միության կողմից կազմակերպած միջոցառմանը օր. Եղիսյանը դասախոսություն է կարդում, ցույց տալով բազմաթիվ լուսապատկերներ: Նա նշել է, որ խումբը այցելել է Կ. Պոլսի պատրիարքարանը և այլ եկեղեցիներ, որ պետությունը արգելում է հայերին նորոգել իրենց եկեղեցիները, դպրոցներն ու աղազային հաստատությունները: Նա տեղեկացրել է, որ Կեսարիայում ապրում են ինք հայ ընտանիքներ, որոնք հայերեն չգիտեն, հայոց ե-

կեղեցին այնտեղ մարգարանի է վերածված. Մալաթիայի եկեղեցիներից մեկը մզկիթի է վերածվել, իսկ մի ուրիշը՝ ախոռի: Մալաթիայի մի քանի հայ ընտանիքներ արդեն թրքացած են: Հալերը կոչվում են թրքական անուններով: Գեղամ Տեր-Կարապետյանը, օրինակ, դարձել է Քենան Պինկադ: Խումբը այցելել է Մեղրեթ էլ Ազիզ, որտեղ ապրում են քսան հայ ընտանիքներ, որոնք հայերեն չգիտեն: Խարբերդում կա մեկ հայ. Տիգրանակերտում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ունի քահանա՝ Վարազ քհնյ. Պեյլեյան, քաղաքում կան ինը հայ ընտանիքներ, որոնցից միայն երեքը գիտեն հայերեն: «Վարազ քահանան միակ եկեղեցականն է ամբողջ Արևելյան Թուրքիոյ մեջ: ...Տիգրանակերտի մեջ ձոյս Եղիսյանը կհանդիպի հայու մը և կհաղցնե. Դուք հա՞յ եք: Մարդը չի հասկնար: — Էրմենի՞. հայր գլխով հաստատական նշան կընեն: ...Վանի մեջ Եղիսյան խանութպանի մը կհարցնեն, թե քաղաքին մեջ հայ կա՞: — Էրմենի յոք (հայ չկա), կպատասխանեն խանութպանը»:

Երբ դրոսաշրջիկները խումբը մոտենում է Անիին, ոստիկանությունը հայտարարում է, որ արգելված է նկարահանումներ կատարել: Եղիսյանը, սակայն, վերադառնալով հանրակառք՝ այնտեղից նկարահանում է Անիի ավերակները: Տեղեկատվությունը այդ հուշածանները հիշատակվում են որպես «Բագրատիդ թագավորության» հուշարձաններ, սակայն չի նշվում դրանց հայկական ծագումը:

«Արարատ», 8 հունվարի 1953

«Արարատ» թերթը գրում է Ռիչարտ Քլոյանի կազմած «Հայկական եղեռներ» ժողովածուի մասին, որն իրենից ներկայացնում է 1913-ից մինչև 1922 թթ. ընկած ժամանակաշրջանում ԱՄՆ-ի տարբեր թերթերում և ամսագրերում 1915 թ. հայկական եղեռնի մասին տպագրված հաղորդագրությունների և հոդվածների հավաքածու: Ինչպես հայտնում է «Արարատը», «այս հրատարակությունը գնահատելի և արդիական է շատ առումներով և առաջին հերթին նրանով, որ երիտթուրքերի գազանությունների մասին այնտեղ բերված մամուլի ապացույցներն ամբողջությամբ հերքում են թուրք պատմաբանների ու պաշտոնական անձանց այն հորինվածքները, որ իբր 1915 թվականի հայկական ջար-

դերը սոսկ հայերի ու նրանց կարեկցողների և՛ րեակալության արդյունք են: ...Համարաբոլոր հոդվածներում հեղինակները արդարացիորեն նշել են երիտթուրքերի վերջնական նպատակը՝ հայկական հարցը ամբողջությամբ և վերջնականապես լուծել հայ ազգի բնաջնջմամբ»:

«Արարատ», 21 մարտի 1953

1933—34 ուսումնական տարում Լոս Անջելեսի մի շարք կոլեջներում կազմակերպվել է «ցեղասպանության պատմություն» նույնի շուրջ դասախոսությունների շարք, որը պետք է ընդգրկի XX դարում կատարված հայկական ցեղասպանությունը, երկրորդ համաշխարհային պատերազմում հրեաների դեմ գործած ջարդերը և այլն: Դասախոսելու է Ժոն Դոնլը: Նման դասընթացներ են կազմակերպվել նաև Մոնրեալի Քոնքորտիա համալսարանում պրոֆ. Ֆրենք Չեքի և պրոֆ. Քրիթ Ժանսոնի կողմից:

«Ջաբրոնեֆ», 20 հոկտեմբերի 1953

Սեպտեմբերի 10-ին Կլենտլի իրանահայ միության սրահում «Նավասարդ» գրական ամսագրի խմբագրության նախաձեռնությամբ տեղի է ունեցել կալիֆորնիական հայ պրոդյուսների համագումար, որին մասնակցել են մտավորականներ, խմբագիրներ և այլք: Կազմակերպիչ հանձնախմբի կողմից ելույթ է ունեցել Անդրանիկ Անդրեասյանը: Համագումարի հինգ նիստերում քննարկվել են հետևյալ հարցերը. «Սփյուռքահայ գրականության նվաճումները, ներկան և ապագան» (Ջարեհ Մեթոնյան), «Սփյուռքահայ գրական քննադատությունը ի՞նչ վիճակ կներկայացնե այսօր. ապագան ի՞նչ հեռանկարներ կարող է սպարգել» (Ավետիս Սանճյան), «Ամերիկան և ամերիկահայոց կենցաղական յուրահատկությունները ամերիկահայ գրականության մեջ» (Օշին Քեչիշյան), «Ամերիկահայ պարբերական մամուլը իբր ազդակ հայ գրականության տարածման» (Հարություն Սուրբըրյան), «Նորարարական շարժումը հայ գրականության մեջ» (Վարդգես Յրանկյան և Հակոբ Կարապենց):

«Ջաբրոնեֆ», 20 հոկտեմբերի 1953

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ